ԵԱՀԿ
Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպություն
Երևանյան գրասենյակ

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՈՒՂՈՐՏՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԵՎԱՆ 2012

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՆԵՐԳՐԱՎՎԱԾ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԻՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

ԵՐԵՎԱՆ 2012

«Համայնքային ոստիկանության ոլորտում ներգրավված ոստիկանության աշխատակիցների համար» ուղեցույցը մշակվել է ԵԱՀԿ փորձագետ Դեյվիդ Այենսոնի կողմից:

ISBN 978-92-9235-898-3

ԱՍՈՂԻԿ

Տպագրված է «ԱՍՈՂԻԿ» հրատարակչության տպարանում:
Ք. Երևան, Սայաթ-Նովա 24, (գրասենյակ)
Ավան, Դավիթ Մալյան 45 (տպարան)
Հեռ. (374 10) 54 49 82, 62 38 63
Էլ. փոստ՝ info@asoghik.am

I. Ընդհանուր դրույթներ

1. Համայնքային ոստիկանության գաղափարը նոր չէ, դրա փիլիսոփայությունը, սկզբունքներն ու կիրառական պրակտիկան գոյություն են ունեցել դարեր ի վեր՝ դրսևորվելով տարբեր ձևերով և տարբեր մակարդակներում: Պատմականորեն, ոստիկանները որոշակի մակարդակներում ձգտել են համագործակցել քաղաքացիների հետ՝ հանցագործությունները կանխելու, հանցավորության մակարդակը նվազեցնելու և հասարակական կարգը պահպանելու ուղղությամբ:

2. Ոստիկանական գործառույթների առավել արդյունավետ իրականացման միասնական կամ լավագույն մոտեցում գոյություն չունի: Այս իմաստով անհրաժեշտ է հաշվի առնել յուրաքանչյուր կոնկրետ երկրի ոստիկանական պրակտիկան, հասարակության զարգացման մակարդակը, իրավագիտակցությունը, սոցիալ-իրավական մյուս իրողությունները, պատմական փորձը և ընտրել կոնկրետ գործելաոճ:

3. Համայնքային ոստիկանությունը բնորոշվում է որպես ոստիկանական գործունեության յուրահատուկ ուղղություն, որը հիմնված է ոստիկանության և համայնքի սերտ համագործակցության վրա և նպատակ ունի արդյունավետ լուծել համայնքի խնդիրները և նրան մատուցել որակյալ ոստիկանական ծառայություն:

4. Այս սահմանումը լիովին համապատասխանում է ՀՀ ոստիկանության պետի՝ «Հայաստանի Հանրապետության համայնքային ոստիկանության ծառայության կանոնադրությունը հաստատելու մասին» թիվ 3535-Ա հրամանին (այսուհետ՝ «Համայնքային ոստիկանության կանոնադրություն»):

II. Ուղեցույցի նպատակը

5. Սույն ուղեցույցը կիրառական տեսակետից հարմար մի միջոց է համայնքային ոստիկանական ծառայության բարդ գործընթացի խնդիրներին անդրադառնալու համար, որի հիմքում ընկած են պրակտիկայից վերցրած օրինակներ և պրակտիկ նկատառումներ, որոնք մեծացնում են ոստիկանական պարտականությունների արդյունավետ կատարման հնարավորությունը:

6. Սույն ուղեցույցը ևս մեկ անգամ կարևորում է «Համայնքային ոստիկանության կանոնադրության» պահանջներին հետևելու անհրաժեշտությունը և վերջինիս կապը Մաս III-ում նշված օրենսդրական շրջանակում ամրագրված ոստիկանության պատասխանատվության ոլորտի հետ: Այն գրված է միջազգային լավագույն փորձի հիման վրա՝ Հայաստանում ոստիկանական գործունեության առանձնահատկություններն հաշվի առնելով:

7. Սույն ուղեցույցը կարևորություն է ներկայացնում գլխավորապես համայնքային ոստիկանների գործառույթների իրականացման, ինչպես նաև անչափահասների հացերով տեսուչների, վերահսկողական լիազորություններ իրականացնող պաշտոնատար անձանց, մասնավորապես՝ համայնքային ոստիկանության ստորաբաժանումների ղեկավարների և ոստիկանության տարածքային բաժինների պետերի ծառայության գծով տեղակալների համար, ովքեր փաստացի ղեկավարում են համայնքային ոստիկանության աշխատանքները: Սույն ուղեցույցը կարևոր է ոստիկանական այլ ծառայությունների համար ևս՝ լինի դա ճանապարհային ոստիկանությունը, թե քննչական կամ արտաքին ծառայությունները, որոնք պետք է ի գիտություն ընդունեն համայնքային ոստիկանության գործունեության սկզբունքներն ու օպերատիվ բնույթը՝ այն հաշվով, որպեսզի իրենց սեփական գործունեությամբ ոչ թե խոչընդոտեն, այլ նպաստեն ժամանակակից ոստիկանական գործունեության այս էական բաղադրիչի ներդրմանը:

III. Օրենսդրական կարգավորումը

8. «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքում տրվում են այն հիմնական օրենսդրական կարգավորումները, որոնց շրջանակներում պետք է գործի ոստիկանությունը: «Համայնքային ոստիկանության կանոնադրությունը» չի շեղվում այդ իրավակարգավորումներից, այլ հստակ կերպով նշում է այս կոնկրետ ոլորտում ոստիկանական գործունեության նպատակները, ինչպես նաև՝ այն դերակատարումը, որն ակնկալվում է ոստիկանության ծառայողներից:

9. Ոչ մի օրենսդրական ակտ որևէ հատուկ սահմանափակում չի նախատեսում առ այն, թե ինչպիսին պետք է լինի, մասնավորապես՝ քաղաքացիների ներգրավվածության մակարդակը, որոշումներ կայացնելու առումով ոստիկանների պաշտոնեական լիազորությունների շրջանակը, կամ՝ որոնք պետք է լինեն այն հայեցողության սահմանները, որի իրացումը անհրաժեշտ կհամարվի համայնքի ներսում ոստիկանության գործունեության դրական արդյունքների հնարավորությունը առավելագույնի հասցնելու համար: Այնուամենայնիվ, տեղերում ուղղորդում ստանալու համար, անհրաժեշտ կլինի դիմել ավելի ավագ ոստիկանների օգնությանը՝ համայնքային ոստիկանության ծառայության այս երեք ուղղությունների միջև համատեղելիությունն ապահովելու նպատակով:

10. Համայնքային ոստիկանության գործունեությունը կարգավորվում է ՀՀ Սահմանադրությամբ, ՀՀ միջազգային պայմանագրերով, «Ոստիկանության մասին» ՀՀ օրենքով, այլ օրենքներով և ենթաօրենսդրական ակտերով, ՀՀ ոստիկանության համայնքային ոստիկանության ծառայության կանոնադրությամբ և ոլորտը կարգավորող ՀՀ ոստիկանության պետի այլ հրամաններով:

IV. Ուղեցույցում օգտագործված հասկացությունները

<u>Հայեցողություն</u> – որևէ խնդրի լուծման ուղղությամբ ոստիկանության ծառայողների կողմից այլընտրանքային տարբերակների և մոտեցումների կիրառման հնարավորություն:

<u>Հանցագործության նախանշան</u> – Իրավախախտումների տեսանելի հատկանիշներ՝ արտաքնապես իրավախախտումներին բնորոշ հանգամանքներ, որոնք վկայում են անօրինական վարքագծի ցուցաբերման մասին և հավանական է, որ կհանգեցնեն ավելի ծանր արարքների, օրինակ՝ հանցագործության:

<u>Համայնքի ներգրավում</u> – համայնքի հետ հաղորդակցվելու գործընթաց, որն իրականացվում է ոստիկանական առօրյա պարտականությունների կատարման ընթացքում, ինչպես նաև՝ ստեղծելով քաղաքացիների, տնտեսվարող սուբյեկտների, շահագրգիռ այլ կազմակերպությունների կամ մարմինների հետ հարաբերություններ ձևավորելու հնարավորություններ, որոնք ուղղված են համայնքի բարօրության ապահովմանը:

<u>Համայնք</u> – այն անձինք, ովքեր բնակվում են որոշակի աշխարհագրական տարածքում կամ այն անձինք, ովքեր այդ տարածք մուտք են գործում որպես տնտեսվարող սուբյեկտներ, գնորդներ, աշխատողներ կամ սովորողներ: Համայնքները տարբերվում են ըստ օրվա ժամերի և շաբաթվա օրերի՝ կախված նրանց կառուցվածքից և հետապնդվող շահերի բնույթից, օրինակ՝ սոցիալական շահեր, կրթություն և ձեռնարկատիրական գործունեություն: Բացի այդ, համայնքների ներսում գոյություն են ունենում ավելի փոքր համայնքներ:

<u>Հարկադրանքի կիրառում</u> – ոստիկանության գործադիր-կարգադրիչ լիազորությունների կիրառում վարչական իրավախախտում կամ հանցագործություն կատարած անձի նկատմամբ:

<u>Քաղաքացիների խորհրդակցական խումբ</u> – համայնքի շահագրգիռ անդամներից բաղկացած խումբ, որոնք հանդիպումներ են անցկացնում ոստիկանության և այլ ներգրավված գործընկերների հետ՝ փոխադարձ մտահոգություն ներկայացնող հարցերը քննարկելու նպատակով:

Խնդրի վերլուծություն – խնդիրների բացահայտման և դրանց լուծման հնարավոր ուղիների դիտարկման նկատմամբ համակարգված մոտեցման դրսևորում:

Դժվար հասանելի խմբեր – համայնքի այն անդամները, ովքեր ինչ-ինչ պատճառներով կարող են դժկամություն ցուցաբերել ոստիկանության կամ իշխանության այլ ներկայացուցիչների հետ շփվելու հարցում:

Գործընկերություն – համայնքային խնդիրների համալիր լուծման նպատակով շահագրգիռ մարմինների և պատասխանատու անձանց միջև համագործակցության և աշխատանքային հարաբերությունների ստեղծման գործելակերպ, որի շրջանակներում գործընկերներից յուրաքանչյուրն իր իրավասությունների, հմտությունների և պատասխանատվության սահմաններում օգտակար է լինում խնդրի լուծմանը:

«S.A.R.A» մոդել – ընդունված մի ձևաչափ, որն օգտագործվում է համայնքների ներսում առկա խնդիրների բացահայտման, ուսումնասիրման և լուծման համար:

V. Ընդհանուր սկզբունքներ

11. Շատ երկրներում «համայնքային ոստիկանությունը» ընկալվում է որպես միմյանցից փոքր-ինչ տարբերվող գործառույթներ, որոնք դրսևորվում են տարբեր մոտեցումների և տարբեր գործելաոճերի տեսքով: Գործակցության մակարդակը և վարչական այն գործառույթների ծավալը, որոնք դրվում են համայնքային ոստիկանության վրա՝ ի լրումն «համայնքի դերակատարման», զգալիորեն տարբեր են: «ՀՀ ոստիկանության մասին օրենքով» ՀՀ ոստիկանության առջև դրված խնդիրների ապահովումը և գործառույթների արդյունավետ իրականացումը իրենց լիարժեք արտացոլումն են գտել «Համայնքային ոստիկանության կանոնադրության» մեջ:

12. Համայնքային ոստիկանության գործունեությանը բնորոշ են որոշ հատկանիշներ, որոնք էական նշանակություն ունեն դրա հաջող իրականացման համար՝ ոչ միայն ոստիկանական գործողությունների արդյունավետության, այլ համայնքի կողմից դրանք ընդունվելու տեսանկյունից: Դրանք են՝

- հստակ կառուցակարգային ռազմավարությունը (Կանոնադրություն),
- լիազորված և առանձնացված խմբերը (համայնքային ոստիկանության ստորաբաժանումներ),
- տարածքի և համայնքի լավ իմացությունը,
- համայնքի ներգրավումն ու հաղորդակցումը,
- խնդրի վերհանումն ու խնդրի լուծումը («S.A.R.A» մոդել),
- նախաձեռնողական, այլ ոչ թե արձագանքող մոտեցումը քաղաքացիների խնդիրների հանդեպ,
- խնդիրների լուծման ուղղությամբ համագործակցային մոտեցումը՝ քաղաքացիների և գործընկերների հետ միասին աշխատելով,
- հայեցողության որոշակի մակարդակը, որի հիմքում ընկած է տարբերակային մոտեցումը՝ ի տարբերություն այն մոտեցման, որը գլխավորապես կենտրոնանում է հարկադրանքի միջոցների կիրառման վրա,
- պարտականությունների կատարումը՝ հիմնված օպերատիվ տեղեկությունների վրա:

13. Ոստիկան-քաղաքացի փոխհարաբերություններ հաստատելուց բացի, համայնքային ոստիկանական ծառայության իրականացումը ոստիկաններին տալիս է բազմաթիվ հնարավորություններ ևս: Դրանցից է երկարատև խնդրահարույց իրավիճակների վերաբերյալ ոստիկանություն տրվող կանչերի թվի նվազումը: Ոստիկանական աշխատանքով քաղաքացիների բավարարվածության մակարդակն աճում է, քանի որ տեսանելի է, որ ոստիկանները զբաղվում են տեղի խնդիրներով, իսկ հանցավորության և հասարակական կարգի խախտումների մակարդակը՝ իջնում, ուստի և՝ ցուցանիշներն էլ բարելավվում են ոստիկանական աշխատանքի կատարելագործման շնորհիվ:

14. Այս դրական արդյունքներն իրենց հետ բերում են նաև ոստիկանական բոլոր ծառայություններին առնչվող որոշակի դժվարություններ՝ ոստիկանության գործողություններն ընդունե-

լի դառնալու ճանապարհին առկա խոչընդոտների հետ կապված, և անհրաժեշտ է ընդունել այդ փաստը: Որպես տիպիկ օրինակներ կարելի է նշել խնդիրների լուծման այլընտրանքային ուղիների գոյությունը փաստելու դժկամությունը կամ համայնքի առանձին տարրերի հետ դրական (սեփական նախաձեռնությամբ, նախաձեռնողական) համագործակցության ապահովման դժվարությունները: Այս առումով, անհրաժեշտ է ապահովել, որպեսզի քաղաքացիների հետ թե՛ դրական, և թե՛ արդեն իսկ կատարված հանցավոր արարքների բացահայտման շրջանակներում տեղի ունեցող ցանկացած շփում հնարավորություն ստեղծի այդ խոչընդոտները հաղթահարելու համար, քանի որ, անկախ արդյունքներից, նրանք մնում այն նույն համայնքի մի մասը, որի համար իրականացվում է ոստիկանական ծառայությունը:

15. Համայնքային ոստիկանությունը հանդիսանում է ընդհանուր ոստիկանական համակարգի մի օղակը և որպես առանձին գործունեության տեսակ կամ ծառայությունների մատուցման ոլորտ չի կարող արդյունավետ գործել ոստիկանության մյուս ստորաբաժանումներից մեկուսի: Իրենց հերթին ոստիկանության մյուս ստորաբաժանումները չպետք է անտեսեն համայնքային ոստիկանության դերն ու նշանակությունը և մշտապես աջակցեն և օպերատիվ կերպով համագործակցեն նրա հետ: Օրինակ՝ համայնքում ճանապարհային երթևեկության անվտանգության ապահովումը, կատարված իրավախախտումների և հանցագործությունների քննությունը, պարեկային ծառայության կազմակերպումը ցանկալի արդյունքներ կարող են ապահովել միայն համատեղ, փոխհամաձայնեցված միջոցառումների շնորհիվ, որը կբացառի առանձին ստորաբաժանումների ոչ պատշաճ կամ ոչ իրավաչափ գործողությունները:

16. Համայնքային խնդիրները դասակարգվում են երեք հիմնական խմբերի.

    1) Դեպքեր, այդ թվում՝ հանցագործություններ և վարչական իրավախախտումներ, որոնք կատարվել են կոնկրետ անձի նկատմամբ կամ առնչվում են մեկ անձի հետ,

2) Դեպքեր, այդ թվում՝ հանցագործություններ և վարչական իրավախախտումներ, որոնք առնչվում են ընտանեկան կամ հարևանական հարաբերություններին: Սրանք սովորաբար տեղի են ունենում սահմանափակ հաճախականությամբ և վերաբերում են մարդկանց փոքր խմբի, սակայն ոստիկաններին ստիպում են բավականին շատ ժամանակ ծախսել:

3) Խնդիրներ կամ մտահոգություններ, որոնք շոշափում են համայնքի զգալի հատվածի շահեր: Հաճախ սրանք այն աստիճան նվազ վտանգավոր են իրենց բնույթով, որ ավանդական ոստիկանական գործողությունների միջոցով դրանց տրվում է զուսպ արձագանք՝ նախքան խնդիրի բարդանալը:

17. Համայնքային խնդիրները դասակարգվում են երեք հիմնական խմբի:

- Դեպքեր, այդ թվում՝ հանցագործություններ, որոնք կատարվել են անձի կամ սեփականության դեմ:
- Հանցագործություններ կամ օգնության կանչեր, որոնք վերաբերում են ընտանեկան կամ մերձավոր հարևանական խնդիրներին: Սրանք սովորաբար տեղի են ունենում սահմանափակ հաճախականությամբ և վերաբերում են մարդկանց փոքր խմբի, սակայն միևնույն ժամանակ ոստիկաններին ստիպում են բավականին շատ ժամանակ ծախսել:
- Դեպքեր կամ մտահոգություններ, որոնք վերաբերում են համայնքի զգալի հատվածին, սակայն հարաբերականորեն դեռևս նվազ վտանգավոր են իրենց բնույթով: Հաճախ այն աստիճան նվազ վտանգավոր, որ ավանդական ոստիկանական գործողությունների միջոցով դրանց տրվում է զուսպ արձագանք՝ նախքան խնդիրն ավելի հասունանալը:

VI. Ոստիկանական տարբեր գործելակերպեր

Ավանդական ոստիկանական գործունեություն

18. Ավանդական ոստիկանական գործունեությունը բնորոշվում է որպես կոնկրետ խնդրին արձագանքող, իրավիճակի նկատմամբ դիպվածային մոտեցման գործելաոճ, որի պարագայում քաղաքացիների ներգրավվածությունը սահմանափակ է, իսկ ոստիկանության ծառայողների ներկայությունը, որպես զսպող միջոց, սահմանափակվում է որոշակի հեռավորության վրա ոտքով կամ մեքենայով պարեկություն իրականացնելով:

Օրինակ. ոստիկանությունը բարձր աստիճանի տեսանելիության պարեկություն է իրականացնում տեղական զբոսայգիներում կամ այլ հասարակական վայրերում, որտեղ ոստիկանները պարզապես քայլում են և քաղաքացիների հետ շփվում սահմանափակ կերպով կամ մեքենաներով իրականացվող ոստիկանական ծառայությունը, որը սահմանափակվում է միայն դեպքի վայր ժամանելով՝ զերծ մնալով շարունակական ներկայությունից և չկենտրոնանալով խնդիրների երկարաժամկետ լուծման վրա:

Այս դեպքում ոստիկանության կողմից դեպքի առթիվ տրվող արձագանքը սովորաբար հանգում է օրենքի պահանջների պարզաբանմանը՝ ուղղված առանձին անձանց ոչ իրավաչափ վարքագծի դադարեցմանը, իսկ անհրաժեշտության դեպքում՝ իրավախախտներին օրենքով սահմանված կարգով պատասխանատվության ենթարկելու առանձին լիազորությունների իրացմանը:

Ավանդական ոստիկանական գործունեության շրջանակներում ոստիկանությունը հիմնականում կենտրոնանում է իր սեփական գերակայությունների (լիազորությունների իրացման) վրա, որը դրսևորվում է իրավախախտումների, հանցագործությունների նախականխման, կանխման, բացահայտման, ինչպես նաև՝ հասարակական կարգի պահպանության և հասարակական անվտանգության ապահովման խնդիրների լուծման մեջ: Այնուամենայնիվ, ոստիկանական գործունեության այս տեսակը հազվադեպ է ներառվում համայնքի անդամների

մեծամասնությանը հուզող խնդիրների և մտահոգությունների շրջանակում, որը հիմնականում ձևավորվում է առավելապես տեղական նշանակության նվազ հանրային վտանգավորություն ունեցող արարքներին, զանցանքներին, օրինակ՝ հանրային վայրերում աղմուկին կամ ոչ մեծ վնասարարությանը վերաբերվող խնդիրներից:

Խնդրակենտրոն ոստիկանական գործունեություն

19. Ի տարբերություն նախորդի, խնդրակենտրոն ոստիկանական գործունեությունը «շեղվում» է ոստիկանության ավանդական գործառույթներից և գլխավորապես կենտրոնանում առկա ընդհանուր բնույթի խնդիրներին երկարաժամկետ լուծումներ տալու ուղղությամբ: Այս դեպքում տրամաբանությունը կայանում է նրանում, որ եթե խնդրի «սկզբնապատճառը» բացահայտված է և վերացված, ապա ոստիկանությունն այլևս ստիպված չի լինում շարունակաբար զբաղվել միևնույն խնդրի լուծումով՝ խնայելով ուժերն ու ժամանակը: Խնդրակենտրոն ոստիկանական մոտեցումը, որպես կանոն, կիրառվում է արդեն իսկ վերհանված առանձին խնդիրների լուծման նկատմամբ, ընդ որում՝ արդյունավետ կերպով համատեղվում են համայնքի բնակիչների արձագանքն և գործընկեր մարմինների միջոցները:

Օրինակ. Համայնքի փողոցներից մեկում տեղակայված բանկոմատից մինչև հրապարակ ընկած ճանապարհին պարբերաբար տեղի են ունեցել ավազակային հարձակումների մի շարք դեպքեր: Ավանդական ոստիկանական գործունեության տեսանկյունից դիտարկելու դեպքում ոստիկանները կժամանեն դեպքի վայր, կգրանցեն հանցագործության դեպքը և օպերատիվ-հետախուզական միջոցներ կձեռնարկեն հանցանք կատարած անձին հայտնաբերելու ուղղությամբ, իսկ խնդրակենտրոն ոստիկանական գործունեության շրջանակներում ոստիկանները կսկսեն ուսումնասիրել խնդրի առաջացման մեխանիզմը՝ փորձելով պարզել հանցագործության կատարման բոլոր պատճառները և նպաստող պայմանները, և թե ինչպես կարելի է կանխել նմանատիպ հանցագործությունների կատարումը: Այս դեպքում

կարելի է ներգրավել տեղական ինքնակառավարման մարմինների ուժերը՝ փողոցային լուսավորություն ապահովելու կամ եղածը բարելավելու ուղղությամբ: Միաժամանակ անհրաժեշտ է բացատրական և իրազեկման աշխատանքներ կազմակերպել համայնքի բնակչության շրջանում՝ ուղղված նմանատիպ հանցագործությունների կանխարգելմանը և նոր օպերատիվ տեղեկությունների ձեռքբերմանը: Բացի այդ, ոստիկանները կարող են կարևոր պահերին ներկայանալ նույն վայրը և ծառայել որպես զսպող գործոն՝ դրանով իսկ նաև ապահովության և անվտանգության տեսանելի հավաստիացումներ փոխանցելով հանրությանը:

Համայնքային ոստիկանություն

20. Համայնքային ոստիկանության ծառայության կազմակերպումը, ըստ էության խնդրակենտրոն ոստիկանական գործունեության հետագա զարգացումն է: Տարբերությունը կայանում է նրանում, որ խնդրակենտրոն ոստիկանական գործունեության առանցքը կազմում են երևան եկած առանձին խնդիրներ, որոնց լուծման համար շահեկան են տարբեր մարմինների (կազմակերպությունների) և քաղաքացիների ուժերի և միջոցների ներգրավումը, մինչդեռ համայնքային ոստիկանությունն այս գործելակերպին դիմում է իր բոլոր գործողություններում՝ անկախ նրանից, թե ինչպիսի բարդության կամ հնչեղության խնդիրների լուծմանն են դրանք ուղղված: Ընդ որում՝ այդ գործողություններն իրականացնելիս համայնքային ոստիկանությունը մշտապես ցուցաբերում է նախաձեռնողականություն, այն է՝ բոլոր գործընկերները միահամուռ ուժերով նպատակային աշխատանքներ են իրականացնում վերհանված խնդիրը լուծելու կամ դրա առաջացման հնարավորությունը չեզոքացնելու ուղղությամբ: Համայնքային ոստիկանության շարժիչ ուժը խնդրի լուծման նկատմամբ համակարգային մոտեցման ցուցաբերումն է՝ լինի դա հանցագործություն, իրավախախտում, թե զուտ համայնքային բնույթի սոցիալական խնդիր: Համայնքի հետ գործընկերության և համագործակցության եղանակներով կազմակերպվող համայնքային ոստիկանության գործելակերպը և միասնական

աշխատանքը մեծացնում է արդյունքի հասնելու հավանականությունը: Արդյունքում՝ մեծանում է համայնքի բնակիչների վստահության, հավատի, պաշտպանվածության և ապահովության զգացողության մակարդակները, ինչն էլ նպաստում է հակահիրավական վարքագծի և այլ բացասական դրսևորումների նվազեցմանը:

VII. Հասկանալ «ձեր» համայնքը

21. Ոստիկանությունը, համայնքին ոստիկանական ծառայություններ մատուցելու համար, պետք է հասկանա այն: Շրջանների ու թաղերի համայնքները զգալիորեն տարբերվում են: Երբեք գոյություն չի ունենում որևէ մեկ համայնք՝ այդ հասկացության նեղ իմաստով, իրականում համայնքները բաղկացած են շատ տարբեր քաղաքացիներից, որոնցից յուրաքանչյուրն ունի իր սեփական կարիքները, մտահոգություններն ու ընդունելի նորմերի մասին իր սեփական պատկերացումները:

22. Շատ համայնքներում կան քաղաքացիներ, ովքեր այնտեղ բնակվում են մշտապես, ովքեր ոչ միայն բնակվում, այլև ձեռնարկատիրական գործունեություն են իրականացնում այնտեղ, կամ էլ նրանք, ովքեր այդ գործունեությունն իրականացնելով համայնքի ներսում, անձամբ բնակվում են համայնքի սահմաններից դուրս: Նաև կլինեն մարդիկ, ովքեր գալիս են դրսից՝ ձեր համայնքի ներսում աշխատելու, երեխաներին դպրոց տանելու կամ պարզապես տրանսպորտային համակարգից օգտվելու համար: Սրանք բոլորը հանդիսանում են համայնքի անդամներ, որոնք շատ տարբեր ակնկալիքներ ունեն ոստիկանությունից:

23. Համայնքն ընդգրկում է բոլորին, սակայն բաղկացած է ենթախմբերից. դժվար հասանելի խմբեր, այդ թվում՝ նրանք, ովքեր շատերի կողմից դիտվում են որպես անընդունելի անդամներ, օրինակ՝ միասեռականները, լեսբուհիները, անտունները, որոշ էթնիկ, կրոնական փոքրամասնությունների ներկայացուցիչները, հաշմանդամություն կամ կրթական խնդիրներ ունեցող անձինք, ովքեր չպետք է անտեսված լինեն:

24. Համայնքին կամ համայնքներին հասկանալը հանդիսանում է համայնքային ոստիկանության էական բաղադրիչներից մեկը, և դրանով զբաղվողներդ պետք է ուսումնասիրեք, թե «ում եք ոստիկանական ծառայություն մատուցում», նրանց «տարբերություններն ու ակնկալիքները», կամ էլ՝ տեղեկություններ ստանաք այդ ամենի մասին:

25. Համայնքում առկա գերակայությունները հիմնականում լինում են երեքը՝

    - ***Ոստիկանական գերակա ուղղություններ*** – նրանք, որոնցով ոստիկանությունը պարտավոր և լիազորված է զբաղվել:
    - ***Սուր համայնքային խնդիրների լուծման գերակա ուղղություններ*** – ոստիկանական ծառայություններ, որոնք մատուցվում են փոքր թվով ընտանիքների համար:
    - ***Քրոնիկ բնույթի համայնքային խնդիրների լուծման գերակա ուղղություններ*** – ոստիկանական ծառայություններ, որոնք փոքրածավալ են իրենց բնույթով, սակայն տեսանելի ազդեցություն են թողնում համայնքի մեծ հատվածների վրա:

26. Ոստիկանությունը համայնքի ներսում առկա խնդիրներին պետք է նայի քաղաքացիների կամ բնակիչների աչքերով՝ նրանց մտահոգությունները լավագույնս հասկանալու համար: Հաճախ փոքր խնդիրներն ի ցույց են դնում այն դժվարությունները, որոնք համայնքն ունենում է ընտանեկան կամ համայնքային ազդեցության շնորհիվ ընդունված նորմերին համահունչ վարքագիծ երաշխավորելու հարցում, և համապատասխանաբար, ոստիկանության կամ այլ մարմինների աջակցության կարիքը:

Համայնքի ներգրավում

27. Հետզհետե ավելի հաճախակի է քաղաքացին պահանջում, որպեսզի իրեն մատուցվի արհեստավարժ և արդյունավետ ոստիկանական ծառայություն, որն ականջալուր է իր սեփական

մտահոգություններին ու առաջնային խնդիրներին և աշխատում է դրանք լուծելու ուղղությամբ: Սրան կարելի է հասնել միայն ոստիկանության ու համայնքի միջև բովանդակալից երկխոսություն ծավալվելու դեպքում:

28. Յուրաքանչյուր համայնքի ներսում կլինեն մարդիկ, ովքեր ուրախ կլինեն համագործակցելու ոստիկանության հետ, սակայն կլինեն նաև այնպիսի տարրեր, որոնք չեն ցանկանա անել դա: Ոստիկանությունը պետք է պարզի, թե ինչու են համայնքի անդամները ցանկանում համագործակցել, այսինքն՝ ինչ են ակնկալում ոստիկանությունից, ինչպես նաև, թե ինչու մյուսները չեն ցանկանում: Միայն այս խնդիրներին քաջատեղյակ լինելով է, որ ոստիկանությունը կարող է աջակցություն տրամադրել ամբողջ համայնքին, այլ ոչ թե դրա առանձին հատվածներին:

29. Բնական է, որ քաղաքացիները համագործակցում են ոստիկանության հետ՝ կամ սեփական ցանկությամբ կամ անձամբ իրենց կամ իրենց հարազատների/բարեկամ-ների/ընկերների կամ հարևանների հետ կապված խնդիրներ ունենալու դեպքում: Ոստիկանության հետ նրանց համա-գործակցության աստիճանը տարբերվում է ըստ նշված պատճառների բնույթի և կարող է շարունակվել նաև տվյալ խնդրին լուծում տրվելուց հետո:

30. Պարզեք գոյություն ունեցող կառուցվածքը և այն համագործակցությունը, որն արդեն իսկ հաստատվել է, ընդ որում՝ ոչ միայն ոստիկանության, այլ նաև շահագրգիռ այլ մարմինների կողմից, որոնց դուք կարող եք դիմել և տեղեկանալ արդեն համայնքի ներսում հայտնվելիս, ինչպես նաև՝ համագործակցելու հետաքրքրություն ունեցող անձանց շրջանակը:

31. Համայնքում կան մեծ հեղինակություն վայելող անձինք, պարտադիր չէ որևէ պաշտոն զբաղեցնող կամ իշխանական լիազորություններով օժտված, որոնք ավելի վաղ են իրազեկվում համայնքում առկա խնդիրների և իրավախախտումների մասին: Նման անձինք կարող են կարևոր օղակ հանդիսանալ նշված դեպքերի մասին տեղեկատվություն ստանալու համար, օրինակ՝

խանութների աշխատակիցները, եկեղեցու ներկայացուցիչները կամ ուղղակի համայնքի ակտիվ անդամները, ովքեր պարբերաբար հավաքվում են զբոսայգիներում և հասարակական այլ վայրերում և քննարկում ընդհանուր հետաքրքրություն ներկայացնող հարցեր:

32. Ոստիկանությունը պետք է գիտակցի, որ համայնքի ոչ բոլոր հատվածների ներկայացուցիչներն են, որ կցանկանան հաղորդակցվել ավանդական եղանակներով, ասենք՝ հեռախոսի միջոցով, փողոցում զրույցի բռնվելով, և մշտապես պետք է դիտարկել հաղորդակցման այլընտրանքային միջոցների օգտագործման հարցը: Միայն այն հանգամանքը, որ անձը չի բարձրաձայնում, դեռևս չի նշանակում, որ նա չունի ասելիք, և հնարավոր է, որ նա նախընտրում է ոստիկանության հետ խոսել մեկ այլ անձի ուղեկցությամբ, ով կարող է աջակցել իրեն կամ որևէ փոքր պատվիրակության կազմում, ինչը կարող է ավելի հարիր լինել նրա մշակույթին: Բացի այդ, երկխոսության համար ընտրվելիք վայրը նույնպես պետք է նպաստի դրան՝ այն հաշվով, որպեսզի քաղաքացիները խոսեն ավելի ազատ և ավելի հարմարավետ պայմաններում:

Օրինակ. Ավագ համայնքային ոստիկանը կամ ոստիկանության բաժնի պետի ծառայության գծով տեղակալը կարող է լինել ամենահարմար անձը՝ համագործակցող կամ համայնքի ներսում բարձր դիրք զբաղեցնող անհատի հետ նախնական շփում հաստատելու տեսանկյունից, ինչին կարող է հաջորդել համայնքային ոստիկանի կողմից այդ հարաբերությունն ապագայում շարունակելը:

Օրինակ. Մի մոռացեք, որ որևէ խմբի/հանդիպման նպատակը տեղական նշանակության խնդիրների քննարկումն է: Հետևաբար, եթե ոստիկանները նախաձեռնում են որևէ հանդիպում, ապա այն պետք է կազմակերպվի տեղի բնակիչների առավելագույն քանակի ներկայությունն ապահովող ամենահարմար վայրում և ժամին՝ այլ ոչ թե այն վայրում և այն ժամին, որը ամենահարմարն է ոստիկանության համար:

Գործընկերություն ձևավորելը և դրա շրջանակներում աշխատելը

33. Համայնքային ոստիկանության գաղափարական հիմքը գործընկերության մեջ աշխատելն է: Գործընկերային հարաբերություններում ներգրավված կարող են լինել քաղաքացիներ, աջակցման խմբեր, պետական մարմիններ և ՀԿ-ներ: Ոստիկանության առջև ծառացող դժվարությունն այստեղ այդ խմբերի բացահայտումն է ու դրանց մաս կազմելը կամ՝ սեփական խմբեր ստեղծելը կամ հանդիպումներ նախաձեռնելը տեղական խնդիրները լուծելու նպատակով:

34. Համայնքային ոստիկանությանը այս առթիվ առաջարկվող մոտեցումներից են՝ ուսումնասիրել արդեն իսկ գոյություն ունեցող խմբերը և փորձել կամ պաշտոնապես անդամակցել դրանց կամ մասնակցել դրանց հանդիպումներին և մասնակիցներին որոշակի տեղեկություններ և խորհուրդներ տալ, ինչը կնպաստի ավելի կայուն կապերի ձևավորմանը: Այս կապերն այնուհետև հիմքեր կստեղծեն հետագա համագործակցության համար:

Աջակցման խմբերի տեսակները

35. Գոյություն ունի աջակցման խմբերի հնարավորությունների օգտագործման մի քանի մոտեցում՝ ուղղված նրան, որպեսզի քաղաքացին կարողանա բարձրաձայնել իրեն հուզող խնդիրները:

Օրինակ. Համայնքի ներսում ձևավորվել է Քաղաքացիների խորհրդակցական խումբ, որը երեք ամիսը մեկ հանդիպումներ է ունենում համայնքի տարածքում գտնվող որևէ վայրում՝ տեղական խնդիրները քննարկելու համար: Տեղական ինքնակառավարման մարմինները, ոստիկանությունն ու այլ շահագրգիռ մարմինները, տեղի քաղաքացիների հետ միասին մասնակցում են այդ հանդիպումներին և այդպիսով՝ ապահովում ներգրավման պաշտոնապես հաստատված բնույթը:

Օրինակ. Մի շարք տեղաբնակներ, ոստիկանության խնդրանքով հավաքվում են մի խումբ ստեղծելու համար, որի նպատակն է

«համայնքային վերահսկման» փոխօգնության միասնական համակարգի ստեղծումը: Այս համակարգի շրջանակներում նախատեսվում է, որպեսզի բնակիչները հետևեն մեկը մյուսի սեփականությանը և ստեղծեն տեղեկատվությունը շրջանառելու միջոցներ՝ ենթադրյալ հանցավոր գործողությունների մասին տեղեկությունները կամ մտահոգություններն արագորեն միմյանց միջև փոխանակելու կամ ոստիկանությանը հաղորդելու նպատակով:

Դժվար հասանելի խմբեր

36. Դժվար հասանելի խմբերը համայնքի այն անդամներն են, ովքեր նախընտրում են մեկուսանալ համայնքի մյուս անդամներից: Հաճախ նրանք ավելի շատ են դառնում հանցավոր գործողությունների, մասնավորապես՝ ֆիզիկական ոտնձգությունների կամ ճնշումների թիրախ՝ ի համեմատ համայնքի մյուս հատվածների ներկայացուցիչների, և դրա հետ մեկտեղ ավելի քիչ են հակված հաղորդելու այդ մասին ոստիկանությանը կամ ավելի սահմանափակ հնարավորություններ ունեն դա անելու:

37. Բոլոր համայնքներն էլ ունեն «դժվար հասանելի խմբեր», խնդիրը կայանում է դրանք հայտնաբերելու ու շփում հաստատելու ուղիներ գտնելու մեջ: Այս խմբերում կարող են լինել որոշակի կրոնական, տարբեր կենսակերպ վարող կամ տարբեր սոցիալական խմբերի պատկանող ներկայացուցիչներ, օրինակ՝ երիտասարդներ, ծերեր կամ այնպիսի խմբեր, որոնք կարող են կասկածվել հակասոցիալական գործունեություն իրականացնելու մեջ, նախկինում դատված անձինք:

Օրինակ. Տեղի եկեղեցիների, ՀԿ-ների կամ աջակցման խմբերի հետ իրականացվող աշխատանքները թույլ են տալիս ապահովել առկա խնդիրների մասին ոստիկանությանը հաղորդումներ տալու այլընտրանքային եղանակներ՝ չեզոքացնելով գոյություն ունեցող արգելքները: «Գնացեք նրանց մոտ, այլ ոչ թե սպասեք, որ իրենք գան»:

Օրինակ. Ավելի լավ է հանցավոր գործունեության կամ համայնքում առկա մտահոգությունների մասին տեղեկությունները ստանալ երրորդ

անձանցից, քան թե ընդհանրապես չստանալ դրանք:

Օրինակ. Հավանաբար, դուք կցանկանաք դիտարկել հետևյալ հարցերը՝

- Ինչպե՞ս են ֆիզիկական հաշմանդամություն ունեցող անձինք շփման մեջ մտնում ոստիկանության հետ կամ այցելում ոստիկանության բաժին:
- Ովքե՞ր են ոստիկանական աջակցության կարիք ունեցող այն անձինք, որոնց մայրենի կամ տիրապետած միակ լեզուն հայերենը չէ:

VIII. Հաղորդակցության ընկալումը և ձեր վարքագիծը

Հաղորդակցությունը երկկողմանի գործընթաց է, որը վերաբերում է երկու և ավելի անձանց միջև տեղեկատվություն փոխանակմանը: Համայնքային ոստիկանության գործունեությունը ենթադրում է մշտական շփումներ, հետևաբար հաղորդակցման հմտություններն ու համապատասխան վարքագիծն էական դեր են խաղում այս երկխոսությանը խոչընդոտող արգելքները չեզոքացնելու գործում:

Օրինակ. Հայելու մեջ նայեք ինքներդ ձեզ իբրև ոստիկանի: Արդյո՞ք դուք տեսնում եք այնտեղ դեմքի բարյացակամ արտահայտություն, մի մարդու, ում կարելի է հեշտությամբ մոտենալ և ում հետ կարելի է հեշտությամբ շփվել, մի մարդու, որը գրավում է, այլ ոչ թե վանում: Եթե ոչ, ապա դուք դժվարություններ կունենաք երկխոսություն հաստատելու հարցում:

Հետգրություն. Կապ չունի, արդյոք այդ երկխոսությունը վերաբերում է ապահովության կամ անվտանգության հավաստիացում տրամադրելուն, հանցագործությունների քննությանը, թե կասկածյալի հետ խոսելուն:

38. Հաղորդակցության ամբողջ ծավալի մեջ տեղեկատվության միայն 7%-ն է, որ փոխանցվում է զուտ խոսքի միջոցով, մնացած ծավալի՝ 38%-ը կազմում է ինտոնացիան (ինչպես եք դուք հաղորդում տեղեկությունը և ինչ տոնով) և վերջապես՝ 55%-ը կազմում են ոչ խոսքային նշանները (մարմնի լեզուն, ժեստերը):

Հետևաբար, պարզ է, որ քաղաքացիների հետ ոստիկանների հաղորդակցման մեծ մասը կազմում է այն տեղեկատվությունը, որը բնութագրում է ոստիկանի արտաքին տեսքը, գործողություններն ու վարքագիծը, այլ ոչ թե փոխանցվող որևէ տեղեկության բուն բովանդակությունը:

Օրինակ. Երբ ոստիկանները ժամանում են դեպքի վայր, նրանց սկսում են դիտարկել և նրանց մասին գնահատականը սկսում է ձևավորվել ժամանելու հենց առաջին պահից: Արդյո՞ք ոստիկանները քաղաքացիներին մոտենում են արհեստավարժ կերպով և ներկաներից յուրաքանչյուրի նկատմամբ հարգանք տածելով: Արդյո՞ք նրանք ներկայացան պատշաճ ձևով և բանիմաց կերպով շփվեցին ներգրավված անձանց հետ, թե՝ վիճաբանության մեջ մտան խնդիրներ ունեցող տարբեր մարդկանց հետ և հանդես եկան զուտ իշխանական դիրքերից: Այս բոլոր գործոնները ազդեցություն կունենան ներկաների կողմից ձեզ տրվող պատասխանների վրա:

Օրինակ. Դուք մասնակցում եք համայնքի անչափահասների խնդիրներին նվիրված մի հանդիպման: Սա շատ ընդհանուր մի թեմա է, սակայն «բաց հարցեր» կամ ոչ միանշանակ պատասխաններ ակնկալող հարցեր տալով կարելի է էապես կոնկրետացնել խնդիրը: Բաց հարցերը նրանք են, որոնց պատասխանը չի լինում՝ «այո» կամ «ոչ», և դրանք տեղեկատվություն ստանալու և մարդկանց խոսեցնելու լավագույն միջոցն են:

Ի՞նչ է իրականում կատարվել:

Որտե՞ղ է տեղի ունեցել գոյությունը:

Ե՞րբ է այն տեղի ունեցել:

Ինչու՞ եք կարծում, որ դուք եք եղել թիրախը:

Ո՞վ է, ձեր կարծիքով, պատասխանատու կամ ո՞վ է ներգրավված:

Ինչպե՞ս են նրանք վերցրել հափշտակված հեռախոսը:

39. Քաղաքացիների կողմից ոստիկանների հետ հաղորդակցվելու դժկամությունը հակամարտության մի ձև է, որի պայմաններում պետք է գործել զգուշորեն: Այս մոտեցման կիրառման մի պարզ մոդել է հանդիսանում հետևյալը.



Ձեր վերաբերմունքը կոնկրետ դեպքի նկատմամբ – դեպքի բնույթը, այդ թվում՝ ներգրավված անձանց շրջանակը, ազդում է նրանց նկատմամբ **ձեր վարքագծի** վրա: Նրանց նկատմամբ **Ձեր վարքագիծը** պայմանավորում է այդ մարդկանց **վերաբերմունքը** ձեր նկատմամբ, և սա ազդում է ձեր նկատմամբ **նրանց վարքագծի** վրա: **Նրանց վարքագիծը** ձեր նկատմամբ ազդում է նրանց նկատմամբ **ձեր վերաբերմունքի** վրա, որն էլ իր հերթին ազդում է **ձեր վարքագծի** վրա:

40. Այս պարբերաշրջանը շարունակվում է և այդ ընթացքում առկա լարվածությունը սկսում է աճել կամ թուլանալ՝ կախված նրանից, թե ինչպես են միմյանց հետ շփվում ոստիկաններն ու քաղաքացիները: Եթե ոստիկանները դառնում են ագրեսիվ, անտարբեր կամ հրաժարվում են մարդկանց խնդիրների մասին լսելուց, ապա իրավիճակն ավելի է լարվում: Եթե ոստիկաններն արձագանքում են և գործում արհեստավարժ կերպով, բանիմաց խոսակցություն են վարում ներգրավված անձանց հետ, ապա լարվածությունը հակված է թուլանալուն, ինչի արդյունքում շփումը դառնում է ավելի դյուրին:

41. Քանի որ ոստիկանները պրոֆեսիոնալներ են, հասկանում են տարաձայնությունների կարգավորման էությունը, ապա բնական կլինի, որպեսզի դեպի լարվածության թուլացումը

տանող առաջին քայլերը կատարվեն հենց ոստիկանների կողմից: Սա թուլության նշան չէ, այլ մարդկանց կառավարելու արհեստավարժ մոտեցում:

IX. Խնդիրների լուծում

42. Խնդիրների լուծումը օգնում է արդարացնել մարդկանց սպասումները, նվազեցնում շարունակաբար ծագող հարցերին ոստիկանների միջամտության անհրաժեշտությունը և ոստիկաններին թույլ տալիս իրենց ջանքերն ու ժամանակը ուղղել այլ հարցերի լուծման: Խնդիրների լուծումը մի գործընթաց է, որի շրջանակներում բացահայտվում են համայնքների մտահոգության առարկան կազմող հարցերը և վեր են հանվում դրանք լուծելու ուղղությամբ առավել համարժեք մոտեցումները:

«S.A.R.A» մոդել

43. Գոյություն ունի խնդիրների լուծման մի քանի ձև: «S.A.R.A» մոդելը հանդիսանում է համայնքային ոստիկանական գործունեության մի մասը, քանի որ այն հեշտ է կիրառել, չնայած միաժամանակ, դրա կիրառման հիմքում ընկած մոտեցումը պետք է լինի համակարգային, ինչը նշանակում է, որ պետք է հաջորդաբար անցնել այն փուլերով, որոնցից յուրաքանչյուրը խորհրդանշվում է մոդելային այս հապավման առանձին տառով:

Քայլ 1-ին – *Զննում կամ հարցում (Scan or survey)* – Պարզել, թե երբ, որտեղ և ինչպես է ծագել կամ շարունակում գոյություն ունենալ խնդիրը: Կիրառվող մեթոդները պետք է լավագույնս բխեն կոնկրետ իրավիճակից և այն աշխատանքներից, որոնք տարվում են որևէ աղբյուրից տեղեկատվություն ստանալու ուղղությամբ՝ ինչպես ոստիկանության ներսից, այնպես էլ համայնքի ներկայացուցիչներից ու այլ մարմիններից: Հավաքված տեղեկությունները պետք է օգնեն խնդրին ավելի առարկայական և հստակ ձևակերպում տալու համար:

Օրինակ. Առանձին վայրում տեղի են ունենում գողություններ: Որպես հարցումների փուլի մի մաս, ոստիկանությունը պետք է հստակ պարզի, թե ինչ գողություններ են կատարվում և ինչու է դա

հանդիսանում խնդիր, նման հանցագործությունների հաճա-խելիությունը, գողացված գույքի արժեքը, հափշտակված գույքի արժեքից զատ՝ հասցված ամբողջ վնասի չափը, կասկածյալի կամ իրավախախտի նկարագրությունը: Այս ցանկը անսպառ է, սակայն ինչքան շատ տեղեկատվություն հավաքվի այս փուլում, այնքան ավելի որակյալ կլինի ուսումնասիրությունը:

Օրինակ. Ոչ բոլոր դեպքերը պետք է որակվեն որպես խնդրահարույց: Անչափահասները, որոնց կողմից պատճառվող անհանգստության մասին հաղորդում է ստացվել, կարող է պարզվել, որ ընդամենը ֆուտբոլ խաղացող կամ որևէ այլ կերպ անմեղ զվարճացող օրինապաշտ երիտասարդներ են, պարզապես՝ փոքր-ինչ աղմկոտ: Այնուամենայնիվ, ժամանակի ընթացքում այս միջադեպերի հաճախակի կրկնությունը կարող է խաթարել քաղաքացիների ապահովության ու անվտանգության զգացումը և պատճառ հանդիսանալ բազմաթիվ բողոքների համար:

Քայլ 2-րդ – *Վերլուծությունը (Analysis)* շատ կարևոր է: Խորքային գործոնների որոշ տարրեր, այն է՝ սկզբնապատճառներ, շատ դժվար է չեզոքացնել կամ վերացնել, եթե ոչ՝ անհնար, օրինակ՝ աղքատությունը կամ գործազրկությունը: Ուստի չնայած, որ այս սկզբնապատճառներին, և պետք է հնարավորինս անդրադառնալ, սակայն, անհրաժեշտ է ընդունել, որ սա ոչ միշտ է, որ գործնական նշանակություն ունի: Փաստերը խոսում են այն մասին, որ հանցավորության մակարդակի նվազեցմանն հնարավոր է հասնել անգամ այն դեպքում, երբ սկզբնապատճառների չեզոքացումն անհնար է:

«S.A.R.A» մոդելի և մասնավորապես՝ վերլուծության փուլի կարևորագույն բաղադրիչներից է «Խնդրի վերլուծական եռանկյունու» (Problem Analysis Triangle) կազմումը, որը ներկայացվում է ստորև և որն օգնում է մասնավորեցնել խնդիրը ըստ դրա տեղի, անձանց կամ տուժողների շրջանակի:

Քայլ 3-րդ - *Արձագանքման (Response)* տարբերակների ընտրությունը պետք է կատարվի փութաջանորեն՝ ապահովելով, որպեսզի ոստիկանության արձագանքը համահունչ լինի կոնկրետ խնդրի պահանջներին, այլ ոչ թե հանդիսանա պարզապես նման դեպքերում ոստիկանության կողմից սովորաբար տրվող պատասխան:

Քննարկվող տարբերակների շրջանակը պետք է լինի որքան հնարավոր է լայն՝ ոստիկանական գործունեության համատեքստում, միաժամանակ, սակայն, հաշվի առնելով այն, թե ինչպիսին կարող է լինել համայնքի, ինչպես նաև համապատասխան այլ, մասնավորապես՝ տեղական ինքնակառավարման մարմինների ու ՀԿ-ների աջակցությունը:

Քայլ 4-րդ – Արձագանքման փուլի արդյունավետության *Գնահատումը (Assessment)* նույնպես պետք է կատարվի շատ շրջահայաց կերպով: Ոստիկաններն հաճախ անտեսում են գնահատման այս փուլը, քանի որ ստիպված են լինում անցնել իրենց առաջադրված հաջորդ խնդրի լուծմանը: Սակայն, անհրաժեշտ է, որպեսզի ստուգվի, թե ինչն է աշխատել, իսկ ինչը՝ ոչ, ինչպես նաև՝ որպեսզի այդ ստուգման արդյունքում արված հետևությունների մասին տեղյակ պահվեն գործընկեր ոստիկանները: Միայն սովորելով է, որ ոստիկանությունը կարող է բարելավել իր կողմից մատուցվող ծառայության որակը: Եթե նմանատիպ խնդիր նախկինում ծագել է մեկ այլ վայրում, ապա դրա լուծման ուղղությամբ աշխատանք տարած ոստիկանների ձեռքբերումները կարող են օգնել հաջորդ անգամ այս կամ այն մոտեցումն ընտրելու և հավանաբար նաև՝ խնդրի հասունացման ավելի վաղ շրջանում միջամտելու և դրան լուծում տալու հարցում:

«Խնդրի վերլուծական եռանկյունի»

44. «Խնդրի վերլուծական եռանկյունին» հանդիսանում է խնդրի համակարգային վերլուծության մի մասը: Սրա հիմքում ընկած է մի պարզ մոտեցում, ըստ որի ոստիկանությանը հաղորդված կամ ոստիկանության կողմից բացահայտված ցանկացած խնդիր ունի երեք հետևյալ տարրերը՝

    - **Դեպքի վայր** – որտեղ տեղի է ունենում միջադեպը կամ հանցագործությունը:
    - **Տուժող կամ թիրախ** – ո՞վ կամ ի՞նչ, օրինակ՝ մեքենա, բնակարան կամ անձ:
    - **Իրավախախտ** – միջադեպի պատճառ դարձած կամ հանցագործություն կատարած անձը:



45. Խնդրի վերլուծությունն այս երեք տարրերի բաժանելը թույլ է տալիս շատ ավելի խորը հասկանալ, թե ինչ է կատարվել և ինչու, ինչպես նաև՝ պարզել, թե ինչի վրա է պետք առանձնակի ուշադրություն դարձնել ոչ միայն դեպքը բացահայտելու, այլև դրա կրկնությունը կանխելու համար: Բացի այդ, նման կենտրոնացումը ոստիկաններին թույլ կտա պարզել, թե իրենց գործընկեր անձանցից կամ կազմակերպություններից որ մեկն է, որ ավելի մեծ դերակատարում կարող է ունենալ կրկնության հավանականությունը նվազեցնելու հարցում, ինչպես նաև ապահովել գործողությունների առավելագույն արդյունա-վետությունը:

Օրինակ. Հանցագործությունները կատարվում են վատ լուսավորված կամ տեսանելիության ակնհայտորեն բարդեցված պայմաններում, որտեղ արարքների կատարումն անցնում է աննկատ: Եթե կասկածյալներն հայտնի չեն կամ տուժողի վարքագիծը շատ քիչ բան է հուշում, ապա անհրաժեշտ է կենտրոնանալ դեպքի վայրի վրա, ինչը պետք է արվի տեղական ինքնակառավարման մարմնի հետ համագործակցելով՝ որպես զսպող միջոցառում փոփոխություններ մտցնելով տեղանքում, ինչպես նաև ապահովելով ոստիկանության ներկայությունը:

Օրինակ. Նմանատիպ հանցագործությունների դեպքի վայրը կարող է լինել տարբեր, սակայն եթե ձեռք բերվող ապացույցները վկայում են այն մասին, որ կիրառվում է հանցագործության նմանատիպ մեխանիզմ, ինչը մատնանշում է նույն հանցագործների ներգրավ-վածության փաստը, ապա անհրաժեշտ է կենտրոնանալ իրավախախտի անձի կամ կասկածյալների շրջանակի վրա:

Օրինակ. Թողարկվել է բջջային հեռախոսի նոր տեսակ, որն ունեն շատ երիտասարդներ, ովքեր քայլում են հեռախոսը ձեռքին: Եթե այս հեռախոսների հափշտակության դեպքերը տեղի են ունենում ամբողջ Երևան քաղաքով մեկ, ինչը վկայում է տարբեր հանցագործների ներգրավվածության մասին, ապա անհրաժեշտ է կենտրոնանալ ժողովրդագրական տվյալ խմբին իրազեկելու վրա՝ նրանց հանցագործության զոհ դառնալու հավանականությունը նվազեցնելու նպատակով:

Օրինակ. Հաղորդումներ են ստացվում բազմաբնակարան մի շարք շենքերի մոտակայքում անչափահասների կողմից վարչական իրավախախտման և հասարակական կարգի ոչ մեծ ծանրության խախտումների մասին: Ոստիկանության արձագանքը կլինի ուղիներ փնտրելը՝ տվյալ վայրում այս երևույթներին վերջ դնելու, ինչպես նաև դրանց պատճառները պարզելու նպատակով: Սա կարող է լինել ոգելից խմիչքի գործածման հետևանք, ուստի լավագույն տարբերակը կլինի աշխատանք տանել տեղի խանութների աշխատակիցների շրջանում, որպեսզի անչափահասները չկարողանան ոգելից խմիչք գնել: Հնարավոր է, որ երիտասարդները չունեն գնալու տեղ, և պարզապես ոստիկանության կողմից շարունակաբար տեղափոխվում են մի վայրից մյուսը: Կարող է լինել մի այլընտրանքային վայր, որտեղ նրանք կարող են որևէ զբաղմունք ունենալ, իսկ տեղական ինքնակառավարման մարմնի օգնությամբ հնարավոր է մաքրել մի տարածք և այն հատկացնել ֆուտբոլ խաղալու կամ որևէ այլ ոչ ծախսատար սպորտով զբաղվելու համար: Ծնողներին իրենց երեխաների վարքագծի մասին տեղյակ պահելը նույնպես մի այլընտրանք է՝ պատժամիջոցների կիրառման ավանդական ձևի կամ հասարակական վերահսկողության համեմատ:

X. Ոստիկանական արձագանքման միջոցներ

46. Համայնքային ոստիկանությունը գործելու է նախկինի համեմատ քաղաքացիների հետ ավելի սերտ շփման և միաժամանակ՝ ոստիկանական գործողությունների համար հաշվետու մնալու պայմաններում: Այս սերտությունը նշանակում է, որ ոստիկանները գտնվելու են արհեստավարժ գործելու անհրաժեշտության ներքո և իրենց աշխատանքը կատարելու են ճշգրտորեն, քանի որ ամենօրյա շփման մեջ են լինելու այն նույն քաղաքացիների հետ, ովքեր ոստիկանների գործունեությամբ բավարարված չլինելու դեպքում, կասկածի տակ են առնելու նրանց աշխատանքի արդյունավետ լինելը:

47. Այս ակնկալիքները պետք է գնահատել որպես դրական երևույթ, որը քաջալերում է ոստիկաններին շարունակելու անել հնարավորը և մատուցել իրենց կողմից խոստացված ծառայությունները, ինչպես նաև՝ հաշվետու լինելու տարբեր մակարդակներում, հանդիպումներում և Քաղաքացիների խորհրդակցական խմբերում՝ յուրաքանչյուր բացթողման համար:

48. Արդյունավետ համայնքային ոստիկանությունը նշանակում է բովանդակալից և արդյունավետ փոխհարաբերություններ հաստատել ոստիկանության, առանձին անհատների, համայնքի ներսում գոյություն ունեցող առանձին խմբերի, ինչպես նաև շահագրգիռ այլ կողմերի հետ: Վստահությունը քաղաքացիների մոտ մեծացնում է համագործակցելու պատրաստակամությունը և կարող է աճել միայն այն դեպքում, երբ ոստիկանությունը մշտապես արձագանքում է արհեստավարժ, հավասարակշռված կերպով՝ դրսևորելով պատշաճ վարքագիծ և մատուցելով այն, ինչ խոստացվել է որպես ծառայություն:

49. Ոստիկանության աշխատանքով հանրության բավարարված-ության մակարդակը պայմանավորված է նրանով, թե ոստիկանության ինչպիսի վարքագծի է այն ականատես լինում, ինչպես նաև թե ինչպիսին է ոստիկանների վարվելակերպը

քաղաքացիների հետ շփումների ընթացքում՝ անկախ մատուցվող ծառայությունների տեսակից և շփման ինտենսիվությունից, մասնավորապես՝ ոտքով պարեկություն կատարելու, անչափահասների և բողոքի գործողությունների հետ կապված հարցերով ոստիկանական գործունեություն իրականացնելու, ինչպես նաև՝ քրեական գործերով և ծանր միջադեպերի առթիվ քննություն կատարելու ընթացքում: Հանրային բավարարվածությունը **չի ապահովվում** որևէ մեկ ոստիկանի կողմից իր պարտականությունները հաջողությամբ կատարելով: Պահանջվում է, որպեսզի ոստիկանության ամբողջ անձնակազմը բավարարի այդ չափանիշին: Այնուամենայնիվ, հանրային բավարարվածությանը **վնասում է** այն մեկ ոստիկանը, ով իր աշխատանքը չի կատարում պատշաճ կերպով՝ թե ակնկալվող արդյունքների, և թե՝ դրսևորվող վարքագծի տեսանկյունից:

50. Համայնքային ոստիկանությունը համայնքի մտահոգություններին ականջալուր լինելն է, այլ ոչ թե զուտ քննարկումներ անցկացնելը: Պարզեք նրանց մտահոգությունները և լրջորեն վերաբերվեք դրանց՝ անգամ, եթե դրանք ձեզ թվում են ոչ էական: Դրանք էական են մարդկանց համար, հակառակ դեպքում նրանք ձեզ չէին հայտնի դրանց մասին: Ոստիկանները պետք է մարմնավորեն վստահության զգացումը և աջակցություն տրամադրեն՝ ապահովելով նաև քաղաքացիների իրազեկվածությունը կատարվելիքի մասին: Մի մոռացեք, որ ձեր խոստացածն ապահովելը ձեր պարտականությունն է, հետևաբար՝ բացատրություն տրամադրեք առ այն, թե ինչ եք անում, ինչպես նաև՝ թե ինչ չեք կարող անել: Ոստիկանության կողմից ծառայությունների վատ մատուցումը, քաղաքացիներին գործի ընթացքի և ելքի վերաբերյալ տեղյակ չպահելը կհանգեցնի նրան, որ ոստիկանությունը կզրկվի որևէ հարգանքից և ապագայում՝ որևէ տեսակի աջակցությունից:

51. Համայնքի ներսում ավելի մեծ աջակցություն վայելելու համար իրավապահ համակարգը կարիք ունի ինչպես տուժողների, այնպես էլ վկաների համագործակցության: Առանց նրանց աջակցության հանցավորների նկատմամբ արդյունավետ քրեական հետապնդում իրականացնելու հնարավորությունները սահմանափակ են: Ոստիկանությունը պետք է տեսանելի

կերպով աշխատի այդ ուղղությամբ՝ նախաքննության, դատարանում ներկայանալու և հետագա փուլերի ընթացքում՝ ապահովելով, որպեսզի նրանք չենթարկվեն որևէ ճնշումների և ապագայում չխուսափեն ոստիկանության հետ համագործակցելուց:

Հանցագործության նկատմամբ վախը

52. Ուսումնասիրությունների արդյունքները հստակ ցույց են տալիս, որ չնայած համայնքը ակնկալում է ոստիկանների արձագանքը կատարվող հանցագործությունների առթիվ, այնուամենայնիվ, այն խնդիրները, որոնք առաջացնում են «հանցագործության նկատմամբ վախը», կապված չեն բուն հանցավորության հետ: Իրականում, այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ հակասոցիալական վարքագիծը, հասարակական վայրում ոգելից խմիչք օգտագործելը, անչափահասների խմբերով հավաքվելը, ավելի մեծ անհանգստություն են պատճառում և ավելի բացասաբար են անդրադառնում կյանքի որակի վրա:

53. Զգայական ընկալումն այստեղ դուրս է գալիս պարզապես տվյալ վայրում կատարվող հանցագործությունների նկատմամբ վախի շրջանակներից և իրականում վեր է ածվում վախի առ այն, որ դա տեղի կունենա հենց իրենց հետ: Հանցագործության նկատմամբ այս վախը պահպանվում է այնքան ժամանակ, քանի դեռ համայնքում տեղի չի ունենում որևէ իրադարձություն, որը նվազեցնում է այն: Դա կարող է լինել ոստիկանության տեսանելի առկայությունը, շրջապատում իրականացվող բարելավումները կամ ոստիկանների կողմից իրավախախտների նկատմամբ կիրառված ներգործության միջոցները:

54. Կատարված մեծածավալ հետազոտությունների արդյունքները վկայում են այն մասին, որ «հանցագործության նկատմամբ վախը» համայնքների ներսում, հատկապես՝ էթնիկ փոքրամասնությունների, մեծահասակների և որոշ չափով՝ կանանց խմբերի մոտ, ավելի մեծ կարևորություն ունի, քան հանցավորության բուն մակարդակը:

55. Որոշ հանգամանքներ նպաստում են վերը նշված վախի ահագնացմանը: Դրանք կոչվում են «հանցագործության նախանշաններ», որոնք ազդում են մարդկանց անձնական մտահոգությունների վրա:

Օրինակ. Շրջապատին անհանգստացնող մարդկանց կողմից բնակելի շենքի բակում աղմկելը, գրաֆիտիների առկայությունը և անչափահասների կողմից որոշակի վայրերում ոգելից խմիչք օգտագործելու փաստերը, կոտրված ապակիներ կամ այնպիսի բնակելի տարածքներ, որոնց կամաց-կամաց, բայց սիստեմատիկ կերպով վնաս է հասցվում:

56. «Կոտրված ապակիների տեսությունը» ցուցանում է, որ գրաֆիտիի, աղբի կամ գույքին ոչ խոշոր չափերի վնաս պատճառելու երևույթներն անտեսելու դեպքում դրանք վերաճում են հասարակական ավելի մեծ վտանգավորություն ներկայացնող գործողությունների՝ ուժեղացնելով հանցագործության նկատմամբ վախը: Հետևաբար, յուրաքանչյուրի շահերից է բխում, որպեսզի ոստիկանության աշխատակիցների ժամանակի մի մասը տրամադրվի այս փոքր խնդիրներին, որոնք բացասաբար են անդրադառնում համայնքի մեծ հատվածի վրա, այլ ոչ թե կենտրոնանալ միայն բուն հանցագործությունների վրա, որոնցից տուժում է համայնքի միայն շատ փոքր մի հատված:

Օրինակ. Շինարարական շատ հրապարակներ շրջապատված են ծալքավոր ցանկապատով, որը գրաֆիտիների և թերթիկների հայտնվելու համար շատ գրավիչ մի տեղ է: Երևանի կենտրոնում գտնվող շինարարական օբյեկտի պատասխանատուն ցանկապատից վերացնում է նկարված բոլոր գրաֆիտիներն ու փակցված բոլոր թերթիկները: Հազվադեպ է լինում, որ գրաֆիտին հայտնվի նորից, քանի որ դրանք անհապաղ վերացվելու պարագայում չկան այդ երևույթի ընդունելի լինելը վկայող տեսանելի ապացույցներ:

57. Սա միջամտության մի պարզ եղանակ է, որին պետք է դիմի ոստիկանությունը՝ աշխատելով շինարարական օբյեկտի սեփականատերերի հետ և կոչ անելով նրանց համապատասխան գործողություններ ձեռնարկել՝ նախքան իրավիճակի կտրուկ սրվելը և խուսափելով համայնքի ներսում

այնպիսի պատկերացում ձևավորելուց, որ տվյալ վայրը իշխանությունների (ոստիկանության կամ տեղական ինքնակառավարման մարմնի) կողմից մատնված է մոռացության և թողնված ինքնահոսի:

58. Նման հանգամանքներում անհրաժեշտ է, որպեսզի համայնքի համար տեսանելի լինի, որ ոստիկանությունն ու համապատասխան այլ մարմինները գործում են հարկադրանքի կիրառման լիազորություններից զատ այլ եղանակներով ևս, և նման այլ մեթոդների գործնական կիրառման փաստերը նոր լիցք են հաղորդում ոստիկանական շահագրգիռ աշխատանքի մասին պատկերացումներին, քաղաքացիներին տրամադրում ապահովության և անվտանգության հավաստիացումներ և խթանում համայնքի աջակցությունը:

Հետգրություն. Նախանշանը կարող է վերաբերել հանցագործություններին, հասարակական կարգի մանր խախտումներին կամ պարզապես շարունակաբար ծագող տեղական բնույթի խնդիրներին:

Հանցավորության նվազեցում

59. Հանցավորության նվազեցումն իրենից ներկայացնում է ավելի ընդգրկուն մոտեցում, քան պարզապես հանցագործությունների կանխումը, և հանդիսանում համայնքային ոստիկանության դերակատարման կարևորագույն բաղադրիչներից մեկը: Հանցավորության նվազեցման ուղղությամբ ուսումնասիրվում է հանցագործությունների կանխման, թիրախային շինությունների ամրապնդման հետ կապված խնդիրների լուծման (օրինակ՝ դրանք մուտք գործելը դժվարացնելու, լուսավորությունը բարելավելու, տեսախցիկներ կամ ձայնա-ազդանշանային համակարգեր տեղադրելու) ցանկացած հնարավորություն, ինչպես նաև՝ այն անձանց հատուկ ուշադրության կենտրոնում պահելու հարցերը, ովքեր կրկին անգամ են դառնում հանցագործության զոհ: Այս բոլոր տարրերը շատ լավ համադրվում են խնդիրների լուծման «S.A.R.A» մոդելի ներքո և համատեղելի են համայնքի ու գործընկերների ունեցած դերը կարևորելու ռազմավարության հետ:

60. Այս մոտեցումը լավագույնս կարող է կիրառվել ոստիկանների կողմից, ովքեր իրենց աշխատանքում ելնում են հանցավորության նվազեցման հետևյալ գաղափարներից՝

- ***Ընդհանուր համայնք*** – Հանցագործությունների կանխմանն ուղղված գրքույկի մշակում, որտեղ դիտարկումներ կարվեն այն մասին, թե ինչպես քաղաքացիները իրենց բնակարանները կարող են ավելի պաշտպանված դարձնել ավազակային հարձակումներից, կողոպուտներից և գողություններից:
- ***Հատուկ վայրեր*** – Որպես թիրախ ընտրել այն վայրերը, որտեղ սկսել են տեղի ունենալ միջադեպեր կամ ի հայտ գալ հանցավորության աճի միտումներ:
- ***Հանցագործությունների զոհերը*** – Այն անձինք, ովքեր դարձել են հանցագործության զոհ կամ որոնց տուժող դառնալն ավելի հավանական է՝ անցկացնել իրազեկման աշխատանքներ, տրամադրել ապահովության և անվտանգության հավաստիացումներ և հավաքել համապատասխան տեղեկատվություն, օրինակ՝ կանանց կամ թանկարժեք մեքենա վարող անձանց վերաբերյալ:

61. Կրկնակի զոհականացումը տեղի է ունենում այն դեպքերում, երբ նույն անձը կամ նույն վայրը որոշակի ժամանակահատվածում դառնում է մեկից ավելի հանցագործության թիրախ: Սա ներառում է սեփականության կամ անձի դեմ կատարվող հանցագործությունները կամ իրավախախտումները, երբ համապատասխան գույքը կամ անձը, մի շարք բարդ պատճառների բերումով, դրսևորում է հանցավոր կամ այլ հակասոցիալական վարքագծի համար ավելի գրավիչ թիրախ դառնալու միտում, և միաժամանակ տուժող անձինք ավելի դժկամորեն են տրամադրված այս դեպքերի մասին ոստիկանությանը հայտնելու հարցում: Էապես կարևոր է ապահովել, որպեսզի ոստիկանները արագորեն պարզեն այս անձանց և նրանց համապատասխան աջակցություն ցուցաբերեն համայնքի ներսում:

Անմիջական և միջամտող վերահսկողության կարիքը

62. Համայնքային ոստիկանությունը չի գտնվում միայն համայնքային ոստիկանների գործառույթների տիրույթում, այլ իրականացվում է վերադասության բոլոր մակարդակներում գործող ոստիկանական վերահսկողության պայմաններում և մասնավորապես՝ գտնվում է ոստիկանության բաժնի պետի ծառայության գծով տեղակալի անմիջական իրավասության ներքո, ով կրում է դրա կիրառման և դրա շարունակական արդյունավետության ապահովման առաջնային պատասխանատվությունը:

63. Բոլոր մակարդակներում վերահսկողություն իրականացնողները այն դերակատարներն են, ովքեր պետք է սահմանեն համապատասխան չափանիշներ և հետևեն դրանց կատարմանը, ինչպես նաև՝ տեսանելի կերպով ապացուցեն իրենց նվիրվածությունը համայնքային ոստիկանության գործին և աջակցեն/վերահսկեն իրենց ենթականերին: Սա կիրառելի է բոլոր մակարդակների համար, այլ ոչ միայն անմիջական վերադաս պետերի կամ ղեկավարների համար:

64. Անմիջական և միջամտող վերահսկողությունը կարևոր է, որպեսզի օպերատիվ աշխատակիցներն իրենց ուշադրության կենտրոնում պահեն համայնքի հետ հարաբերությունները զարգացնելու և համայնքի ներգրավվածության մակարդակը բարձրացնելու հարցերը՝ կանխելով նահանջը դեպի ոստիկանական ծառայության մեջ զուտ ավանդական մոտեցումների կիրառումը:

65. Գոյություն ունի պատկերացում, ըստ որի համայնքային ոստիկանությունը, իր առջև դրված խնդիրները լուծելիս, օժտված է ավելի մեծ ազատությամբ և ինքնուրույնությամբ, և սա, հայեցողության հետ մեկտեղ, իր հետ բերում է նաև որոշակի կոռուպցիոն ռիսկեր: Որոշ չափով սա ճշմարիտ է, հետևաբար, իրականացվող վերահսկողությունը պետք է կրի ինչպես տեսանելի, այնպես էլ միջամտող բնույթ՝ այն հաշվով, որպեսզի ապահովվի ամենախիստ չափանիշների պահպանումը:

66. Վերադասի հիմնական գործառույթներից մեկն է՝ ապահովել, որպեսզի իր ենթակա համայնքային ոստիկանները հստակ ցուցումներ ստանան, ինչպես նաև գործեն մի սկզբունքի ներքո, որը կոչվում է «օպերատիվ տվյալներով ուղղորդվող ոստիկանական ծառայություն»:

Օրինակ. Մեծ մասամբ, երբ քաղաքացիները բողոքում են ոստիկանների գործողությունների դեմ, բողոքների առարկան լինում է անքաղաքավարի վարքագիծը կամ հանցագործության կամ միջադեպի առթիվ պատշաճ քննություն չկատարելը: Վերադասը պատասխանատու է ոստիկանների գործողությունների նկատմամբ վերահսկողություն իրականացնելու և ըստ անհրաժեշտության, միջամտելու համար՝ ապահովելով համարժեք մոտեցումների և վարքագծի դրսևորումը: Սա համայնքային ոստիկանության համար նույնքան կարևոր է, որքան և ավանդական ոստիկանական գործունեության պարագայում:

«Օպերատիվ տվյալներով ուղղորդվող ոստիկանական ծառայություն»

67. Ոստիկանական գործառույթներն իրականացնելիս, միշտ էլ տրամաբանական է եղել հատկապես այս կամ այն վայրում ոստիկանների գտնվելը կամ հատուկ պարեկություններ կատարելը: Համայնքային ոստիկանությունը կարիք ունի այս մեթոդի շատ ավելի լայն կիրառման՝ ապահովելու համար, որպեսզի յուրաքանչյուր դեպքում, երբ ոստիկանը անցնում է իր պարտականությունների կատարմանը, այն վայրի ընտրությունը, որտեղ նա պետք է գնա պայմանավորված լինի օպերատիվ տեղեկությամբ: Համայնքային ոստիկանության, ինչպես նաև ոստիկանական այլ գործառույթների լիարժեք իրականացումն ապահովելու նպատակով, ոստիկանների առջև պետք է դրված լինի մի խնդիր՝ լինել ճիշտ վայրում, ճիշտ ժամին, կատարել ճիշտ գործողություններ, որոնք երաշխավորում են առավելագույն տեսանելիությունը, հանցագործությունների կանխումը և խնդիրների լուծմանը նպաստող քայլեր ձեռնարկելը, ինչպես նաև՝ քաղաքացիների հետ այնպիսի հաղորդակցումը, որը տրամադրում է ապահովության

և անվտանգության հավաստիացում և միասին աշխատելու հնարավորություն:

68. Ճիշտ մարդու, ճիշտ տեղում և ճիշտ ժամին գտնվելու գաղափարը կարևոր է ոստիկանական ծառայության ռացիոնալ կազմակերպման, արդյունավետության և հանրային բավարարվածության համար: Երբ ճիշտ մարդիկ (ոստիկանության ծառայողները) տեղակայված են ճիշտ վայրում, նրանք ոչ միայն ստեղծում են հանցագործությունը կանխելու կամ հանցածին պայմանները բացահայտելու հնարավորություն, այլև հանրությանը հավաստիացումներ են տրամադրում առ այն, որ ոստիկաններն իրենց խնդիրներով զբաղվում են՝ դրանք նվազեցնելու հետ միաժամանակ:

Օրինակ. Ճիշտ վայրում և ճիշտ ժամին գտնվելը ապահովվում է ոստիկանության տեսանելիությունը առավելագույնի հասցնելու նպատակով, մասնավորապես՝ ուսումնական օրվա սկզբում և վերջում դպրոցների մոտակայքում, խանութների աշխատանքային ժամերին, հասարակական ժամանցի վայրերում և այն վայրերի մոտակայքում, որտեղ շատ մարդ է լինում (շուկաներ) կամ պետական շենքերի մուտքերի մոտ:

Հետգրություն. Պետք է ուշադրություն դարձնել նրան, որպեսզի համայնքային ոստիկանությունը ընկալվի ոչ թե որպես անվտանգություն ապահովող ևս մեկ պարեկային ծառայություն, այլ մի հնարավորություն, որը պետք է լինի տեսանելի, և մի ծառայություն, որը պետք է շփվի քաղաքացիների հետ ու քննարկի տեղական նշանակության հարցերը: